**Արձանագրություն N 2.2**

**ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

24.02.2020թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Գ. Գևորգյան
Ռ. Ադամյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. **Տեղեկություններ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցման և պարզաբանման մասին**

------------------------------------------------------------------------------------------------------------

(Ա. Միրզոյան)

1.1 Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն նոր բնակելի շենքի կառուցման շինմոնտաժային աշխատանքների N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 2020 թվականի 21.02.2020թ. ստացվել է հարցադրում:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է տրամադրվելիք պարզաբանման հայտարարությունը (կցվում է):

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------ Ա. Միրզոյան

Անդամ՝ ------------------------------ Դ. Շատվերյան

------------------------------ Ռ. Եղիազարյան

------------------------------ Գ. Գևորգյան

------------------------------ Ռ. Ադամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------ Ն. Հարությունյան

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 24-ի թիվ 2.2 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն**

**Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/1**

21.02.2020թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը.

**Հարցադրում**

Ինչպես է ստացվում, որ մյուս բոլոր պատվիրատուները տրամադրում են նախահաշիվ-ծավալաթերթ, իսկ Դուք՝ ոչ: Խնդրում ենք հղում կատարել՝ որ օրենքի, որ հոդվածի, որ կետով եք առաջնորդվում, որտեղ է նշված գնորդին նախահաշիվ-ծավալաթերթ կամ նախահաշվային գին չտրամադրելու կարգը:

**Պարզաբանում**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ծավալաթերթ-նախահաշիվը հրավերին չի կցվել հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա. պարբերության առաջին նախադասությամբ սահմանված պահանջը, որով սահմանվում է, որ հրավերին կցվում է ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռներով ծավալաթերթը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Նազիկ Հարությունյանին:

Հեռախոս՝ 011621821
Էլ.փոստ՝ tender1@minurban.am

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով